ԵՂՋՅՈՒՐԴ ԼՑՐՈՒ ՅՈՒՂՈՎ ԵՎ ԳՆԱ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. 1 ԹԱԳ. 16:1-14

*1 Եվ Տերը Սամուելին ասաց. Մինչև ե՞րբ պիտի Սավուղի համար սուգ անես, որովհետև ես մերժեցի
նրան, որ նա չթագավորի Իսրայելի վրա: Եղջյուրդ լցրո՛ւ յուղով և ե՛կ քեզ ուղարկեմ բեթլեհեմացի
Հեսսեի մոտ, որովհետև նրա որդիներից մեկին ինձ համար թագավոր տեսա: 2 Սամուելն ասաց.
Ինչպե՞ս գնամ. եթե Սավուղը լսի, ինձ կսպանի: Եվ Տերն ասաց. Հետդ մի երի՛նջ վերցրու և ասա՛, թե՝
“Եկել եմ Տիրոջը զոհաբերություն անելու: 3 Եվ Հեսսեին է՛լ հրավիրիր զոհաբերության, իսկ ես քեզ
կհասկացնեմ, թե ի՛նչ ես անելու. ինձ համար թագավոր պիտի օծես նրան, որին քեզ կասեմ:*

*10 Եվ Հեսսեն Սամուելի առջևով անցկացրեց իր յոթ որդիներին, և Սամուելը Հեսսեին ասաց. Տերը
սրանցից ոչ մեկին չընտրեց: 11 Եվ Սամուելը Հեսսեին ասաց. Սրա՞նք են քո բոլոր տղաները: Եվ
Հեսսեն ասաց. Տակավին մնացել է կրտսերը. նա հիմա ոչխարներն է արածեցնում: Եվ Սամուելը
Հեսսեին ասաց. Մա՛րդ ուղարկիր և բերե՛լ տուր նրան, որովհետև մենք սեղան չպիտի նստենք, մինչև
նա այստեղ չգա: 12 Եվ նա մարդ ուղարկեց ու բերել տվեց նրան. նա շիկահեր էր, գեղեցիկ աչքերով և
դեմքով էլ գեղեցիկ: Այն ժամանակ Տէրն ասեց. Վեր կաց օծիր դորան, որովհետեւ սա է: 13 Սամուելը
վերցրեց յուղի եղջյուրը և օծեց նրան իր եղբայրների մեջ, և այդ օրից հետո Տիրոջ Հոգին զորավոր
կերպով իջավ Դավթի վրա. և Սամուելը վեր կացավ ու գնաց Ռամա:*

1. ԻՆՉՈՒ՞ ԱՍՏՎԱԾ ԸՆՏՐԵՑ ԵՂՋՅՈՒՐԸ:

1 Եվ Տերը Սամուելին ասաց. ...Եղջյուրդ լցրո՛ւ յուղով և գնա

- ***Եղջյուրը կապված է զոհաբերության և փրկության հետ:***

  Գլխից պետք է եղջյուր կտրել: Որտեղ արյուն չկա, այնտեղ յուղ չկա: Երբ արյուն տեսնես, յուղը կհոսի...

- ***Աստվածաշնչում «եղջյուրը» օգտագործվում է որպես ուժի, զորության, հաղթանակի և պատերազմի խորհրդանիշ, որը ներկայացնում է Աստծո կարողությունը պաշտպանելու իր ժողովրդին, այդ իսկ պատճառով այն հաճախ օգտագործվում է Աստծո զորությունն ու իշխանությունը նկարագրելու համար:***

2. ՄԻՆՉև ԵՐԲ ՊԻՏԻ ՍԱՎՈՒՂԻ ՀԱՄԱՐ ՍՈՒԳ ԱՆԵՍ:

- ***Ի՞նչ նոր բան է Տերը խնդրում ձեզանից:***

- ***Կա՞մ ինչ-որ հին կամ սառը հարաբերություն, որին դեռ տրամադրում եք ձեր մտքերը, զգացմունքները կամ էներգիան:***

- ***Պե՞տք է, որ անցյալում ինչ-որ բան բաց թողնեք, որպեսզի կարողանաք ընդունել ներկան:***

  Կրկնեք այս խոսքերը և ասեք՝ Դավիթն ինձ է սպասում:

3. ԲՈԼՈՐՆ ԱՊՐՈՒՄ ՈՒ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՎՇՏԻ ՀՈՎԻՏՈՎ:

- ***Դա նորմալ է, սակայն այնտեղ մնալը նորմալ չէ:***

  Հռութը Նոեմիի հետ գնում է Բեթլեհեմ...

  Հակոբը սգաց Հովսեփի համար...

  Հովսեփը սգաց իր եղբայրների համար...

  Դավիթը սգաց կորած որդու համար...

  Աննան սգաց ամուլ լինելու համար...

  Մարիամը սգաց Հիսուսի համար...

- ***Ինչ պետք է անել, երբ քայլում ես վշտի հովտում:***

  Աննան աղոթեց...

  Ա Թագ 2:1 – Աննան աղոթեց և ասաց. Իմ սիրտն ուրախացավ Տիրոջով, Տիրոջով բարձրացավ իմ եղջյուրը, Բերանս հոխորտաց իմ թշնամիների դեմ, Քանզի քո փրկությամբ ուրախացա:

  Դավիթը երգեց...

  2 Թագ. 22:2-3 - 2 Նա ասաց. Տերն իմ վեմը, իմ բերդն ու իմ ազատարարն է: Աստված իմ ժայռն է, և ես նրա մեջ եմ ապաստան գտնում, Իմ վահանը և <u>իմ փրկության եղջյուրը</u>, իմ բարձրութիւնն ու ապաստանը, Իմ ազատիչը. Դու անիրավությունից ազատում ես ինձ:

- ***Զաքարիան Սուրբ Հոգիով լցվց, մարգարեացավ եւ ասեց.***

  Ղուկ. 1:69 - Եվ իր ծառայի՝ Դավթի տնից մեզ համար <u>փրկության եղջյուր կանգնեցրեց</u>, ինչպես որ դարեր առաջ իր սուրբ մարգարեների բերանով ասել էր.

4. ՀԻՍՈՒՍԸ ՄԵՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԵՂՋՅՈՒՐՆ Է:

5. ԻՄ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԵՂՋՅՈՒՐԸ ԻՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԵՆՔՆ Է:

13 Սամուելը վերցրեց յուղի եղջյուրը և օծեց նրան իր եղբայրների մեջ, և <u>այդ օրից հետո</u> Տիրոջ Հոգին զորավոր կերպով իջավ Դավթի վրա. և Սամուելը վեր կացավ ու գնաց Ռամա:

- ***Սամուելը Դավթին օծեց իր եղբայրների ներկայությամբ՝ Աստծո հրահանգով գաղտնի:***

- ***Հուդայի մարդիկ օծեցին Դավթին:***

- ***Իսրայելի բոլոր երեցները Դավթին օծեցին Քեբրոնում:***

6. ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՆԱԽՈՐԴՈՒՄ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂԹԱՆԱԿԻՆ:

Ա Թագ. 17:33 – Սավուղը Դավթին ասաց. Դու չես կարող այդ փղշտացու դեմ գնալ և մենամարտել նրա հետ, դու դեռ պատանի ես, իսկ նա պատերազմի մարդ է մանկությունից ի վեր:

34 Եվ Դավիթն ասաց Սավուղին. Քո ծառան իր հոր ոչխարներն էր արածեցնում, և երբ առյուծ կամ արջ էր գալիս և հոտից ոչխար տանում, 35 ես գնում էի նրա ետևից, զարկում էի նրան և նրա բերանից ազատում, և երբ նա հարձակվում էր ինձ վրա, բռնում էի նրա մորուքից, զարկում էի ու սպանում: 36 Ծառադ առյուծ էլ է սպանել, արջ էլ. թող այս անթլփատ փղշտացին էլ լինի նրանցից մեկի պես, քանզի նա կենդանի Աստծու զորքերին նախատեցե: 37 Եվ Դավիթն ասաց. Տերը, որ ինձ ազատել է առյուծի և արջի ճանկերից, այս փղշտացու ձեռքից էլ կազատիե:

38 Եվ Սավուղը Դավթին ասաց. Գնա՛, և Տերը քեզ հետ լինի: Եվ Սավուղն իր հանդերձները հագցրեց Դավթին ու նրա գլխին պղնձե սաղավարտ դրեց և զրահ էլ հագցրեց նրան: 39 Դավիթը հանդերձների վրայից կապեց Սավուղի սուրը և սկսեց ման գալ, որովհետև սովոր չէր. և Դավիթը Սավուղին ասաց. Սրանցով չեմ կարող ման գալ, որովհետև սովոր չեմե. և Դավիթն իր վրայից հանեց դրանք:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ